ՅՈՒՅՍ-ՅՈՒՅՍ

1886

№ 190 ԵՐԵՒԱՆ ՏՈՒԲ Մարտի 7 Կոպեկներ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՒԲ № 190

Տարին 10 թուրլի, կէս տարին 6 թուրլի, երեք ամիսը 3 թ. 50 կ.
Տարին 5 կուպէկ։
Տարածողները իրենց վրայից են վճարում փոստի համար։

Խմբագրատուն Տաղտկալի Փող., Peдакция «Нор-Дар».
Imp. Tirits. Rédaction «Nor-Dar».

Ընդունվում են բոլոր տեսակ յայտարարութիւնները 9-րդ երես (էջ) մարտ օրից վճարի 2 կ., բարձրացրած տառերով 3 կ.։
2-րդ։ Յայտարարութիւնները ընդունում են միայն խմբագրատանից։
Յայտարարութիւնների համար վճարը կատարւում է նախապէս։

ՎԱՂՎԱ ՎԱ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՁԱԿԱՒՈՐԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

Ամսագիր 7 Դեկտեմբեր 1886

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

(Հիմնական հարց) *)

Ա.

Ընդհանուր ազգային ժողովի ներկայացուցիչ Տ. Գրիգոր Տէր-Յովհաննիսեանցը ելաւ խօսելու։

— Ես, ասաց նա, ոչ մի նոր բան չեմ ասելու, որովհետև ինչ որ ես ունէի ասելու, արդէն ասել եմ։ Ես միայն ուզում եմ ասել, որ ինչ որ ասում են, թէ ազգային ժողովը ոչ մի որոշում չի տուել, սխալ է։ Ազգային ժողովը որոշում է տուել, միայն թէ ոչ այնպիսի, ինչպիսին ուզում էին ստանալ ներկայացուցիչները։ Ազգային ժողովը որոշում է տուել, որ ներկայացուցիչները գնան Պետերբուրգ, ներկայացնեն ազգի կարիքները, ինչպէս որ կան, և ոչ թէ ինչպէս որ ուզում են ներկայացնել։ Ազգային ժողովը ասել է, որ ներկայացուցիչները գնան

դրվելով քարտ ճիշտվելի վրայոն վեր-
դրվել քարտ ճիշտվելի վրայոն վեր-
ռաղ, վասնզ վեռևորով քարտի ի կող
-ար յուսիսային շամփրը ժոլ մի քար
-ամբ ՅԱրագածիՆ հարթ ճիշտ ոչն

Վ

տուտար տաղ—քրճում
-աշ ոգջման՝ քրմշղա ճոպը քմոիդամ
-ինդուսկան ՅԱյժմ ը ճգմեռատվում
-ցուցանչէչ՝ յուռնա վրած վր ճգուքժոշ
ոգ վնաճուի նաննա յուսիսա ժս-Հղվ
վր դվճգնուի ՅԱյժՆ ը ցուցուսկան
-Նա ոսկ ոգչ վերՅոսվ դվճՆ
-ամար ամար... ով ...ուռգուսար ...ՅՈՒՆ
...ող յուշվի... ՆՅղատրա Հչ ը ղաղ
-անում վերև—Հչ ՅՈՒՆ ՅԱյժՆ վրգուռ
-ամՆՈ ՅԱմռվգա ...ուռգուսար ...ՅՈՒՆ
ճաշչ նաղմաչ ճարսի տառ ՅԱարսի
—ղանգման Հչ ՅՈՒՆ ՅԱյժՆ ...ՅՈՒ
...ՅՈՒՆ ՅԱյժՆ

ղանգուսկան իատա քուսկատատվոգ ը ղանգ
-տան ճգուռ ՅԱմռվգուռ ը ղանգ
-ող, ՅԱտ ՅԱյժՆ ՅԱյժՆ ը ղանգ
-ող

ՅՈՒՆՈՒՍԻՑ – Հունվարի 23-ին Ալեքսանդրապոլի գավառապետ Ա. Ա. Ռոստոմովը հրավիրել էր գավառի հայ ազգաբնակչության ներկայացուցիչներին՝ նրանց հետ խորհրդակցելու համար այն միջոցների մասին, որոնք պետք է ձեռնարկվեն Ալեքսանդրապոլի գավառում ժանտախտի տարածումը կանխելու նպատակով։ Ժողովին ներկա էին գավառապետի օգնական Ա. Ա. Ռոստոմովը, Ալեքսանդրապոլի գավառական ոստիկանապետ Ա. Ա. Ռոստոմովը, Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Ա. Ա. Ռոստոմովը, Ալեքսանդրապոլի գավառական բժշկապետ Ա. Ա. Ռոստոմովը, Ալեքսանդրապոլի գավառական ֆելդշերապետ Ա. Ա. Ռոստոմովը, Ալեքսանդրապոլի գավառական դեղագործ Ա. Ա. Ռոստոմովը, Ալեքսանդրապոլի գավառական ազգաբնակչության ներկայացուցիչներ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՐԱԶԱԲՈՑՆ, 1 Նոյեմբերի.—Վարազաբոյն գիւղը գտնւում է Վարանդ գաւառակում (Վարաբաղում)։ Օտարազիները այդ գիւղին Արանզամին են կոչում։ Գիւղի դիրքը շատ գեղեցիկ է։ Գիւղը սարի սորոտի վերայ է և առաջը, դէպի արեւելեան կողմը դարձած, մինչև Կովկասեան սարերը բոլորովին բաց։ Վարազաբոյնի օդը և ջուրը առողջարար են և նրանց համեմատելով միւս գիւղերի հետ, բաւականաչափ մաքուր են, սակայն մարդիկ, առանձին կանայք իրենց տգիտութեամբ երբէք ուշադրութիւն չեն դարձնում մաքրութեան վերայ։ Լուացքի ամեն տեսակ անմաքրութիւններ սովորութիւն ունին միշտ փողոցները թափելու։ Հասկանալով, որ իրենց դա վնաս է։ Տների ընդհանրապէս գեղի տակ են շինուած, առանց լուսամուտի, միայն երդիկն է լուսամուտի տեղ ծառայում։ Տների մէջ օջախ են վառում, որի ծուխից սեանում են ամբողջ տան գերանները, սիւները և վերջապէս բոլոր տան մէջ եղած իրերը։ իսկ բնակիչները լուռ կուլ են տալիս նրան։ Տների իանաւ, բակերում հաւը անասնները։—ահա սրանք են գիւղացիների բնակարանները։ Ամբողջ Վարազաբոյնում առողջ և զուարթ դէմքով երեխայ չէք գտնիլ։ ամենքը դալկացած, սնացած, սպրթնած արարածներ են. պատճառները չատ պարզ են։ Ամեն տուն էլ անասուններ ունի, որոնք ամառը ամեն երեկոյ մնում են գիւղացու բակում, իսկ ձմեռը նոյն բնակարանի մէջ են ապրում։ Դրանց աղբի ու մէղի հոտն հեռուից արդէն կարելի է զգալ։ Խեղճ երեխաների կեանքը այդ աղտոտութիւնների մէջն է անցկենում։ Գիւղի մէջ մեռնողները աւելի փոքրերից են պատահում, քան մեծերից, պատճառ որ երեխաները անտանելի օդին դիմանալ չեն կարողանում։ Փոքրերը երբ երիտասարդական հասակն առնում են, այդ ժամանակուանից արդէն նրանք հեռզհետէ ընկնում են առողջանալ իրենց կեանքի մեծ մասը հիւղից դուրս այգիներում կամ դաշտերում անցկացնելով։ Մարդիկ առողջ են և ուժեղ, այնպէս որ կարողանում են սարսափելի ցրտերին դիմանալ միևնոյն հագուստով ինչ որ ամառը։ Կանայք նոյնպէս պակաս առողջութեան տէր չեն։ Մարդ զարմանում է նկատելով, որ ամբողջ գիւղի թէ հարսերը և թէ հասակաւոր կանայքը ամենքն էլ երեխայի տէր են։ Գիւղի երեխաներին (երկու տեղ) թիւ չկայ։ Չնայելով, որ թէ մարդկանց և թէ կանանց ամբողջ տարուայ ընդունդը միատեսակ է և շատ անհանգամանալի, այնուամենայնիւ առողջ կազմուածքի տէր լինելով կարողանում են չափազանց ծանր գործեր կատարել, օրինակ կանայք ոտաբոքիկ իւրաքանչիւր առաւօտ այգի են գնում վեց վերստ տարածութիւն և երեկոները կրկին տուն դառնում։ Այնտեղ նրանք խաղող են քաղում, էշերի վերայ բարձում, կերակուր եփում և մի տղամարդի չափ գործ կատարում։ Տանն էլ պարապ չեն մնում։ անտառից, որ բաւական հեռու է, թփեր են կտրտում բերում հաց թխում, տունը մաքրում, անասուններին գարի դարման հասցնում, աղբիւրից, որ $^1/_4$ վերստ հեռու է, օրական 1—2 կուժ ջուր բերում, իսկ մանր մունր գործերին անուն չեն տալիս։ Սակայն չնայելով, որ այդքան գործ են կատարում, բայց և այնպէս կրկին պակասութիւններ են, որ մարդի աչքի են ընկնում և այդ պակասութիւնները գլխաւորապէս առաջանում են նրանից, որ ոչ մի բան իւր որոշուած տեղը չունի։ այսպէս օրինակ՝ երեկոյեան երբ մշակը տուն է գալիս, նա իւր խուրջինը, տարած իրերը, իչի փայտը և այլն և այլն, ամեն բան թողնում է դրանը. չները կաշուէ պարանները են զողանում, երեխաները այս կամ այն վերցնում, իսկ հասակաւորներից մինն էլ խուրջինը ներս է տանում և տան մի անկիւնը, զբօսում և այդ պատճառով էլ, երբ միւս օր առաւօտը վեր կենալով գործի են պատրաստւում գնալու ոչ մի բան չեն կարողանում ժամանակին անել. մինչև նրանք իրենց հարկաւոր բաները կը գտնեն, արդէն առաւօտը անցնում է։ ինչպէս մարդիկն են իրենց գործերը խճճուած և անկանոն կերպով կատարում, նոյնպէս և կանայք։ Տան մէջ առհասարակ ամեն տեղ անկանոնութիւն է տիրում։

Խաչենի

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒԻՐԵՐ

—«Politische Correspondenz»-ի տեղով, մօտերքս անդլիական մինիստրների խորհրդում տեղի ունեցող վիճաբանութիւնները կարող են նշան համարուել Անգլիայի և Աւստրիա-Ունգարիայի մօտիկանալուն։ Այդտեղ քննուել է բոլղարական խնդիրը, և բոլոր մինիստրների խորհուրդը այն է եղել, որ միասին գործեն Աւստրիա-Ունգարիայի հետ։ խորհրդի վճռին համաձայն։ Սալսբիւրի կաբինէն կը միանայ այն բոլոր միջոցների հետ, որոնց որ Աւստրիան յարմար կը տեսնէ գործադրելու՝ երբ Ռուսիան իւր զօրքերով Բոլղարիան գրաւելու և կամ թէ մի որ և իցէ այժ բանեցնէ բոլղարական ներկայ կառավարիչների դէմ։ Մի խօսքով Անգլիան և Աւստրիա-Ունգարիան պիտի աչխատեն այնպիսի դէպքերի առաջը առնելու, որոնք կարող են եւրոպական խաղաղութիւնը վրդովելու պատճառ դառնալ։

—«Neue Freie Presse»-ին հաղորդում են, որ բոլղարական պատգամաւորներից չատերը Դլադստօնին ուղերձ են ուղարկել, որի մէջ չնորհակալութեամբ յիչելով անդլիական ազատասիրների մեծ առաջնորդի մեծամեծ ծառայութիւնները, յիչատակելով բոլղարական ազգի վերաբերմամբ, խնդրում են նրան մի անգամ էլ իւր հզօր ձայնը բարձրացնելու բոլղարների օգտին։

—Նոյեմբերի 3-ին Լիդում ազատասիրների միութեան ժողով կայացաւ, այդտեղ Ջօն Մօրլէյը, որ Դլադստօնի վերջի մինիստրութեան միջոցին իրլանդական գործերի պետական-քարտուղարն էր, խօսրհուրդ էր տալիս, որ ազատասիրները միանան և պահանջեն իրլանդիայի համար հօմ-րուլ-ը։

—Բոլղարական ազգային ժողովը ենամակալութեան գահական ճառին պատասխանել է։ «Ժողովը չնորհակալ է ենամակալութեան այն ջանքերի համար, որով նա աչխատում էր քաղաքացիների իրաւունքների և երկրի մէջ էլ խաղաղութիւնն ու կարգը պահպանելու համար և իւր կատարեալ հաւատն յայտնում է դէպի ենամակալութիւնը։ Ժողովը համոզուած է, որ ենամակալութիւնը այսուհետև էլ նոյն անձնազոհութեամբ կը չարունակէ իւր գործունէութիւնը մինչև այն ժամանակ, երբ ազգային ընտրեալը իւր գահը կը բազմի։ Ազգային ներկայացուցիչները խոստովանում են, որ ամենածանր հանգամանքները և ազգի միաձայն դանակութիւնը անհրաժեչտ կացուցին ազգային ժողովի գումարը։ Ազգային ժողովը իսկոյն կը սկսի իչխանի ընտրութիւնը, որպէս զի դրանով երկիրը ազատէ ճգնաժամից, որի մէջ նա գտնվում է։ Կեցցէ անկախ Բոլղարիան»։

—Վիեննայից հեռագրում են «Нов.»-ին, որ իտալական երեք զրահակիր նաւեր ճանապարհ ընկան դէպի Մայատա կղզին, ուր կը միանան անգլիական նաւատորմղին։

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Զատնուած վաչխառուն Ինովրացլաւեան դատարանը մօտերքս կլիմ կեվիչ անունով մի վաչխառուի 6 ամսուայ բանտարկութեան և 1,500 մարկ տուգանքի դատապարտեց, նրա համար, որ վերջինս ուրիշներին փող տալիս նրանցից վերցնում էր 3,650 տոկոս։

***

Փախուստ բանտից։ Մօտերքս Պարիզում, Լա-Րօչֆուկո փողոցում, իւր սեփական տան մէջ վախճանուեցաւ իւր 83 տարեկան հասակում բարօնեսս Ֆօրժէն, գրաֆ Լավալետի և Ժմիլի Բօգարնէի աղջիկը և Ժոզէֆին թագուհու քոյրը։ Այս պատուի կեանքում մի դէպք պատահեցաւ, որ յաւերժացրեց Օրաս Վերնէի իւր «Փախուստ կօնսերժերժերի բանտից» անունը կրող նկարով։ Երբ Պարիզում Նապոլէօնի էլբա կղզուց փախչելու լուրը տարածուեց, գրաֆ Լավալետը իսկոյն ուիրապետեց պատային գլխաւոր կառավարութիւնը։ բայց ձերբակալուելով, 1815-ին մահուան դատապարտուեցաւ։ Նրա ամուսինը և աղջիկը, որ այն ժամանակ տասներկու տարեկան էր, աղաչանի ուղեկցութեամբ այցելեցին նրան և ճաչեցին նրա հետ։ Երեկոյեան աղջիկն ու աղախինը դուրս եկան բանտից մի կնոջ ուղեկցութեամբ, որ արտաւում էր և որին պահապանները գրաֆուհու տեղ ընդունեցին։ Բայց երբ բանտապետը նրան բանտի առանձնասենեակում տեսաւ, որ տղամարդի չորերով կանգնած էր, իսկոյն ազազակ բարձրացրեց։ Բայց արդէն գրաֆը փախել, ազատուել էր։ Գրաֆուհուն և տասներկուամեայ աղջկանը դատի մատնեցին—բայց արդարացրին, երբ այս եղելութիւնը հասցրին Լուդովիկոս XVIII-ի ականջը, նա ասաց. «Գրաֆուհին իւր պարտքն է կատարել»։ Բարօնեսսը մինչև առանձնացած կեանք էր վարում։ Նրա սալօնում կախուած էր մինչև Օրաս Վերնէի վերադիչեալ պատկերը այն պատկերների հետ, որոնք Նապոլէօն I-ի կեանքից էին առնուած։ Բարօնեսսը երբէք չէր աչխատում Նապոլէօն III-ի պալատում ելոյմուտ ունենալու՝ թէև վերջինս չատ անգամ հրաւիրում էր նրան։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

5 Նոյեմբերի

ՊԵՏՍ. Ունգարական գէլէգատսիայի կոմիսիայի նստում գրաֆ Անդրաշին ի միջի այլոց ասաց. «Աւստրիայի միութիւնը Գերմանիայի հետ բնական է և նրանց զարգացման վերայ վստահ լինելով է կազմուած։ Երեք պետութիւնների միութիւնը շատ անհանգստութիւններ է պատճառում նրանց չահերը միևնոյն ժամանակ միջոցներ է ձեռք առնուած անկարգութիւնները պատահելու դէպքում. այն զօրքերը, որոնք պատրաստ պիտի լինին աղմուկ յարուցուածին պէս պատրաստ գտնուելու, գնդակներ են ստացել։

Խմբագիր-հրատարակիչ
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱԼՂԱՄ ԷՅԿԱԼԻՊՏԻ

Ա. ԷՆԴԼՈՒՆԴ ԿՕՍՄԵՏԻԿԻ

Բալղամ էյկալիպտի գործադրութեան ժամանակ, արդելում է մազերը թափուելուն, չափազանց ամրացնում է ներքնոց արմատը, ոչնչացնում է թեփը և թարմացնում է գլխի մաշկը։ Մի չիչի գինն է 1 ր. 50 կ. ճանապարհածախսով 2 ր.—2 չիչը ճանապարհածախսով 3 ր. 50 կոպէկ կնդծ վճարելուց ղրուչանալու համար, խնդրում են պահանջել կարմիր թանաքով Ա. Էնդլունդի առորագրութիւնը Ս. Պետերբուրգի կոսմետիկական լաբարատորիայի մարկան։

Կարելի է ստանալ Ռուսիայի կայսերութեան մէջ յայտնի դեղատներում։

Գլխաւոր պահեստը ամբողջ Ռուսիայի համար գտնվում է Ս. Պետերբուրգում, Ա. Էնդլունդի Ս. Պետերբուրգի կոսմետիկան լաբարատորիայում, Լիտէյնայա № 38։

Թիֆլիսում ծախվում է Կովկասեան գեղօրէից առևտրական ընկերութեան մէջ։

(Ц. 28121) 13—12

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն Մարսէյլի և Բաթումի մէջ։

Չորեքշաբթի, նոյեմբերի 12-ին, «ԱՆԱՏՕԼԻԱ» (Anatolie) շոգենաւը, նաւասղետ «ԲՕՇԵԼ» (Boschel) Բաթումից կը գնայ Տրապիզոն, Օրդու, Սամսօն, Կ. Պոլիս և Մարսէյլ։

Տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան գործակալներին—Բաթումում՝ պ. ԳԱՍՊԱՆԻՈՆԻՆ, Թիֆլիսում՝ պ. ԻՆՆՈՒՆ, նախկին գ. երէյա Աբծրունիների № 103. 4—4

ԱՆԴՐԿՈՎԿԱՍ. ԵՐԿՐԻ ԿՕՄՄԻՍԻՕՆԷՐՈՒԹԻՒՆ

ԴԵՊՈ ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐԻ

ԱՅՐ ՄԱՐԴԻԿՆԵՐԻ ԵՒ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԵՂԲ. ԴՕՎԼԱԹԵԱՆՑՆԵՐԻ

Սրանով յայտնվում է Ի գիտութիւն պ. պ. գնողների, թէ աշնան և ձմեռն համար ստացուած է ռուսական և օտարերկայ ամենալաւ գործարաններից մեծ քանակութեամբ և վերջին ձևով կարած ու լաւ յատկութիւն ունեցող այր մարդիկնեըի և երեխաների շորեր։ Մեծ քանակութեամբ գնողներին մեր փիրման ծախսում է բաւականին արժան գնով և երաշխաւորվում է նիւթի և աշխատութեան համար։

Մագազինում կան ամեն չափսերի շորեր, կայ և արհեստաւոր շորերը նորոգելու համար։

Իրրև ապացոյց արտասահմանեան ապրանքի թարմութեան, խնդրում ենք ուշադրութիւն դարձնել ներկայ տարուայ մաքսատան պլոմբի վերայ։ Ուսուցիչների և ուսուցչուհիների համար զիջումն է լինում։

Մագազինը գտնվում է. Թիֆլիսում, Գօլովինսկի պրօսպեկտի վերայ, տուն Միրզոյեանի, նախկին Բելովի, իսկ Բագուում —Քալանթարեանի պասսաժում № № 11 և 12.

25—12

Дозволено цензурою. Тифлисъ, 6-го Ноября 1886 г. Տպարան Մ. Գ. Գօտինեանց և ընկ. Типографія М Д. Ротиніанцъ. и К-о Гол. пр., д. № 41